«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈԱՉ-02/02

Հաստատված է

ՄԳՀ գիտական խորհրդի « 22 » 08 . 2022թ. նիստում

Ռեկտորի ժ/պ ______ Պատել Ա.Ն.

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ք. Երևան – ք. Վանաձոր

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ ՈԱԿ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է ՀՀ օրենսդրության և Համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:

1.2. ՈԱԿ-ի առաքելությունն Համալսարանում կրթության որակի շարունակական բարելավման ապահովումն ու որակի մշակույթի ամրապնդումն է:

1.3. Սույն կանոնակարգում լրացումներն ու փոփոխությունները կարող են կատարվել ՈԱԿ ղեկավարի առաջարկությամբ և ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի ներկայացմամբ՝ ռեկտորի հրամանով:

1.4. ՈԱԿ-ի վերակազմավորումը կամ լուծարումը կատարվում է Համալսարանի կոնոնադրության համաձայն:

II. ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կատարելագործել Համալսարանի որակի կառավարման ներքին համակարգը,

2.2 Նպաստել Համալսարանում որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) ներբուհական գործընթացների և մեխանիզմների շարունակական զարգացմանը,

2.3 Օժանդակել Համալսարանի գործունեության համապատասխանությանը մասնագիտական կրթության հավատարմագրման ազգային և միջազգային չափանիշներին,

2.4 Նպաստել Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգի ստեղծմանը և զարգացմանը:

2.5 Աջակցել Համալսարանում որակի մշակույթի ձևավորմանը և ամրապնդմանը:

III. ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Համալսարանի ՈԱ քաղաքականության և ռազմավարության մշակում և պարբերական վերանայում, աջակցություն բոլոր մակարդակներում դրանց իրագործմանը,

3.2. Համալսարանի որակի կառավարման ներքին համակարգի հստակեցում և կատարելագործում,

3.3. Կանոնակարգային և ընթացակարգային-կազմակերպական հենքի ստեղծում և դրանց կիրառման մշտադիտարկում, վերահսկում,

3.4. ՈԱ գործընթացների ներդաշնակեցում և իրականացում Համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում, դրանց կառավարում և բարելավում,

3.5. ՈԱ գործընթացներում Համալսարանի ներքին և արտաքին շահակիցների ներգրավում,

3.6. ՈԱ խնդիրների շուրջ Համալսարանի շահակիցների իրազեկության բարձրացում,

3.7. ՈԱ համար Համալսարանի հաշվետվողականության աջակցություն ներքին և արտաքին շահակիցների առջև՝ թափանցիկ, մատչելի և օբյեկտիվ տեղեկատվության տրամադրմամբ,

3.8. որակի ներքին և արտաքին շրջանակների միջև ներդաշնակության ապահովում՝ ՈԱ ներքին չափանիշների ու չափորոշիչների մշակում ազգային և միջազգային պահանջներին համապատասխան,

3.9. եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակի ապահովման գործընթացների հետ համեմատելի ու համադրելի գործընթացների կիրառման ապահովմանը նպաստում,

3.10. աջակցություն կրթական արդի տեխնոլոգիաների, դասավանդման, ուսումնառության և գնահատման նոր մեթոդաբանության ներդրմանը,

3.11. կրթական ծրագրերի ու որակավորումների պարբերական մշտադիտարկման, վերանայման, ու հաստատման հստակ, պարզ ու թափանցիկ մեխանիզմների ստեղծման, ամբողջականացման ու շարունակական կատարելագործման ապահովում,

3.12. ՈԱ և դրա առաջընթացի գնահատման ցուցիչների բարելավման, օրինակելի փորձի բացահայտման ու դրա տարածման վերաբերյալ առաջարկությունների տրամադրման ապահովում:

IV.ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.1. Պլանավորում, իրականացնում, գնահատում և մշտապես բարելավում է որակի ներքին ապահովման գործընթացները, զեկուցում դրանց արդյունքների

մասին, սահմանում է ՈԱ ներքին չափանիշներն և չափորոշիչներն՝ ՀՀ և եվրոպական ստանդարտներին համահունչ (ГОСТ РИСО 9001:2015):

4.2. Մշակում է Համալսարանի ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը:

4.3. Համակարգում, վերահսկում և վարչական աջակցություն է տրամադրում ՈԱ գործընթացների իրականացմանը Համալսարանի բոլոր ստորաբաժանումներում:

4.4. Ապահովում է ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ներքին և արտաքին շահակիցների, փորձագետների գործուն մասնակցությունը:

4.5. Համագործակցում է ՀՀ մասնագիտական կրթության «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հետ:

4.6. Ապահովում է մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին:

4.7. Պատրաստում է ՈԱ ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման համար, համակարգում և աջակցում է դրանց իրականացմանը Համալսարանի բոլոր ստորաբաժանումներում:

4.8. Կազմակերպում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան, ստուգում է նոր և վերանայված կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթները:

4.9. Մշակում է դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքակազմը (հարցումներ, ֆոկուս-խմբեր և այլն) և ընթացակարգերը:

4.10. Մշակում է կրթական ծառայությունների արդյունավետության և որակի գնահատման գործիքներն (հարցումներ, ֆոկուս խմբեր և այլն) ու ընթացակարգերը և վերահսկում դրանց իրականացումը,

4.11. Կազմակերպում է շահակիցների կարիքների ուսումնասիրությունը և դրանց արդյունքների վերլուծությունը, այդ թվում նաև ՄԳՀ Որակի կառավարման ներքին համակարգի և ՈԱԿ գործունեության որակի գնահատումը, ապահովում է շահակիցների հետ հետադարձ կապը, իրազեկում նրանց արդյունքների մասին:

4.12. Ապահովում է ստորաբաժանումների հետ համագործակցությունը և դրանց կողմից կրթական բարեփոխումների ուղղությամբ կատարվող աշխատանքների վերաբերյալ տրամադրում խորհրդատվություններ,

4.13. Համագործակցում է Համալսարանի գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների ՈԱ հանձնաժողովների հետ և աջակցում նրանց աշխատանքներին:

4.14. Համագործակցում է Համալսարանի շահակիցների հետ, ՄԳՀ կայքի միջոցով ապահովում տեղեկատվության արտաքին փոխանակումը էլեկտրոնային փոստով՝ շահակիցների համար ընձեռնելով որակի ապահովման ներքին համակարգի կառավարման բարելավման առաջարկությունների հնարավորություն:

4.15. ՈԱԿ կանոնակարգային փաստաթղթերը և տարեկան հաշվետվությունները զետեղում Համալսարանի կայքում:

4.16. Ներբուհական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կազմում է հաշվետվություններ, զեկուցագրեր, զեկույցներ, վերլուծություններ և նմանաբովանդակ այլ փաստաթղթեր:

4.17. Համակարգում է Համալսարանի կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և օժանդակում դրանց արտաքին գնահատման գործընթացներին:

4.18. Կազմակերպում է Համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացը, համապատասխան զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը:

4.19. Համակարգում է Համալսարանի ստորաբաժանումների աշխատանքը՝ հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ:

4.20. Ուսումնասիրում է ՈԱ միջազգային փորձը, համապատասխան մեխանիզմների տեղայնացման ուղղությամբ ներկայացնում առաջարկություններ:

4.21. Համալսարանի որակի կառավարման ներքին համակարգի գործունեության ամենամյա վերլուծություն և ըստ անհրաժեշտության առաջարկությունների ներկայացում այն կատարելագործելու, կանոնակարգային փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ իրականացնելու մասով:

4.22. ՈԱԿ-ը հաշվետու է Համալսարանի գիտական խորհրդին ՈԱ ներքին համակարգի առկա վիճակի, դրա առանձին բնութագրիչների, կատարողականի առանցքային ցուցանիշների մասին:

V.ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1. ՈԱԿ աշխատանքները համակարգում է ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորը:

5.2.ՈԱԿ հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ռեկտորը՝ Կենտրոնի ղեկավարի առաջարկությամբ և ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի ներկայացմամբ:

5.3. Կենտրոնի աշխատողների իրավունքներն ու պարտականությունները բխում են Կենտրոնի նպատակներից, խնդիրներից և գործառույթներից:

5.4. Կենտրոնի աշխատողները պաշտոններում նշանակվում կամ ազատվում են ռեկտորի հրամանով՝ Կենտրոնի ղեկավարի առաջարկությամբ և ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի ներկայացմամբ:

5.5. ՈԱԿ-ը կազմված է.

- Կենտրոնի ղեկավարից,
- Համալսարանի կրթական գործընթացի որակի կառավարման և բարելավման մասնագետից,
- Համալսարանի շահակիցների կարիքների ուսումնասիրության և վերլուծության մասնագետից:

VI.ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐԸ

6.1. Կենտրոնը գլխավորում է ղեկավարը, ում պաշտոնին նշանակում և ազատում է Համալսարանի ռեկտորը:

6.2. Կենտրոնի ղեկավարը պարտավոր է.

6.2.1. համաձայն ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգի ղեկավարել և վերահսկել ՈԱԿ աշխատանքները,

6.2.2. պատասխանատվություն ստանձնել Կենտրոնի աշխատանքների արդյունավետության և որակի, նրա առջև դրված խնդիրների կատարման համար,

6.2.3. մշակել Համալսարանի ՈԱ քաղաքականություն և ընթացակարգեր,

6.2.4. ստեղծել ՈԱ ուղեցույցներ, Համալսարանի գործունեության ռազմավարական ծրագրերի ու պլանների մեթոդական փաստաթղթեր,

6.2.5. կազմակերպել և նախապատրաստել ինքնավերլուծություն՝ Համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման նպատակով,

6.2.6. կազմել ՈԱ գծով շահակիցների իրազեկվածության բարձրացման սեմինարների, վերապատրաստումների, կլոր սեղանների ծրագրեր,

6.2.7. մշակել բենչմարքինգի մեթոդիկա, կազմակերպել ստորաբաժանումների և կրթական ծրագրերի բենչմարքինգ,

6.2.8. ստեղծել շահակիցների կարիքները բացահայտող մեխանիզմներ, իրականացնել այդ կարիքների ուսումնասիրություններ,

6.2.9. ձևավորել որակի ներքին ապահովման համակարգ, նպաստել դրա զարգացմանը,

6.2.10. ձևավորել որակի ներքին ապահովմանն աջակցող ուսանողական շարժում,

6.2.11. աջակցել Համալսարանի որակի մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Համաձայնեցված է.

1. Իրավախորհրդատու՝
   ի.գ.թ., դոցենտ, Գ. Մ. Գրիգորյան _____
   ստորագրություն

2. Որակի ապահովման կենտրոնի ղեկավար՝
   փ.գ.թ., դոցենտ, Գ. Ք. Ավագյան _____
   ստորագրություն